



# Թեստ տարրական աստիճանի ուսուցիչների համար

Մաթեմատիկա

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից՝ առարկայական գիտելիք և ակադեմիական ունակություններ:

Թեստի առավելագույն միավորն է՝ 65

Թեստում ներկայացված առաջադրանքները, ձևաչափի տեսակետից տարատեսակ են: Ուշադրությամբ ընթերցեք յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգը, լավ ըմբռնեք, թե ինչ է պահանջվում առաջադրանքը կատարելիս, և այնուհետև ընտրեք կամ գրեք պատասխանը:

### Ի նկատի ունեցեք.

- Եթե ճիշտ պատասխանի հետ մեկտեղ կնշեք նաև ոչճիշտ պատասխանը, միավոր ձեռք չեք բերի:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 5 ժամ:

Մաղթում ենք հաջողություն:



# Առարկայական գիտելիք

1. Թվանշաններով 6 և 8 գրեցին բոլոր հնարավոր տասնորդական կոտորակներն այնպես, որ յուրաքանչյուր տասնորդական կոտորակը գրելիս՝ կիրառեցին միայն այս երկու թվանշանները, այն էլ այնպես, որ յուրաքանչյուրը երկուական անգամ: Ստացած տասնորդական կոտորակներից ամենամեծի և ամենափոքրի գումարը հավասար է.

ա) 893,288-ի,

ծ) 895,466-ի,

ջ) 953,48-ի,

զ) 975,36-ի:

2. Թեմուրին 20 լարիով գնեց միտոդանի և վանդակավոր տետրեր: Միտոդանի տետրերի համար նա վճարեց ընդամենը  $x$  լարի: Մեկ միտոդանի տետրն արժեր 40 թեթրի, իսկ վանդակավորը՝ 50 թեթրի: Ստորև թվարկածներից ո՞ր արտահայտությունն է ցույց տալիս, ընդամենը քանի՞ տետր գնեց Թեմուրին:


ա)  $40x + 50(20 - x)$

բ)  $x:40 + (20 - x):50$

գ)  $0,4x + 0,5(20 - x)$

դ)  $x:0,4 + (20 - x):0,5$

3. ABCD սեղանի բոլոր գագաթները համընկնում են այն ցանցի հանգույցներին, որի ամեն մի վանդակը քառակուսի է (տես՝ գծագիրը): Ինչի՞ է հավասար ABCD սեղանի մակերեսի հարաբերակցությունը ABD եռանկյան մակերեսի հետ:



- ա)  $\frac{7}{5}$ -ի,
- բ)  $\frac{10}{7}$ -ի,
- գ)  $\frac{3}{2}$ -ի,
- դ)  $\frac{5}{3}$ -ի:

4. Ունենք միայն մեկական 1, 5, 7 կիլոգրամանոց կշռաքարեր: Ստորև թվարկածներից քանի՞ կիլոգրամանոց նյութ կշռել չենք կարողանա նժարաններով կշեռքի վրա միայն այս կշռաքարերը կիրառելիս:

ա) 3

ბ) 4

գ) 9

դ) 11

5. Տրված է երկու նախադասություն.

I. Եթե ուսանողը միջանկյալ գրավորից առավելագույն գնահատման 50%-ից ավելին չի արժանանա, ապա նա տրված առարկայի կրեդիտը չի կարողանա ձեռք բերել:

II. Ուսանողը տրված առարկայից կրեդիտը չկարողացավ ձեռք բերել:

Այս նախադասություններից բխում է, թե՞ ոչ այն, որ ուսանողը միջանկյալ գրավորից առավելագույն գնահատման 50% կամ ցածրին արժանացավ:

- ա) Բխում է միայն առաջին նախադասությունից,
- բ) Բխում է միայն երկրորդ նախադասությունից,
- գ) Բխում է երկու նախադասություններից միասին,
- դ) չի Բխում տրված նախադասություններից:

6.  $\diamond$  և  $\triangle$  խորհրդանշաններով նշված են թվանշաններ: Ինչի՞ է հավասար  $\diamond + \triangle$ , եթե  $2\diamond \cdot \triangle 8 = 1102$ :

ս) 13-ի,

ծ) 12-ի,

ը) 11-ի,

զ) 10-ի:



7.  $a$  և  $x$  այնպիսի թվեր են, որ  $a > 5$  և  $4x - 7a = 0$ : Թվարկաձևերից ո՞ր անհավասարությունն է անպայման ճշմարիտ:

ս)  $x > 9$

ծ)  $x > 7$

ժ)  $x < 9$

զ)  $x < 7$

**8.** Լուկան ունի փայտե ձողիկներ, որոնց երկարությունն է 1 սմ, 2 սմ, 4 սմ, 8 սմ և 16 սմ, յուրաքանչյուր չափից՝ երկուական հատ: Լուկան այս ձողիկներից որևէ երեք ձողիկով եռանկյուն կազմեց: Լուկայի կողմից կազմած եռանկյան.

- ա) երեք կողմի երկարությունը միմյանց հավասար է,
- բ) երեք կողմը տարբեր երկարության է,
- գ) միայն մեկ կողմի երկարությունն է 16 սմ,
- դ) միայն երկու կողմերի երկարությունն է միմյանց հավասար:


9. Տրված են դրույթներ.

- Բոլոր բարձրալեռ տարածաշրջաններում յուրաքանչյուր լճի ափին աճում է մրտավարդ ցեղի բույս:
- Նեպալում որոշ լճի ափին մրտավարդ ցեղի բույս չի աճում:

*Եթե այս դրույթները ճիշտ են, ապա ստորև թվարկածներից ո՞րը չի կարող լինել ճիշտ:*

- Նեպալում որոշ լիճ, որի ափին մրտավարդ ցեղի բույս է աճում, բարձրալեռ տարածաշրջանում չի գտնվում,
- Նեպալում որոշ լիճ, որի ափին մրտավարդ ցեղի բույս է աճում, բարձրալեռ տարածաշրջանում է,
- Մրտավարդ ցեղի բույսը միայն այն լճի ափին է աճում, որը բարձրալեռ տարածաշրջանում է,
- Նեպալում լճեր միայն բարձրալեռ տարածաշրջաններում են:

10. Թվային առանցքի վրա նշված են A, B, C և D կետերը: A և C կետերի կոորդինատները ցույց են տրված գծագրի վրա: B կետը AD հատվածի միջնակետն է, իսկ C կետը՝ BD հատվածի: B կետի կոորդինատն է.



ա) 62

ბ)  $62\frac{1}{3}$

գ)  $62\frac{2}{3}$

դ) 63

11.  $a * b * c = a - 3b + 2c$  ցանկացած  $a, b, c$  թվերի համար:

Ինչի՞ է հավասար  $a * b * c + b * c * a + c * a * b$  արտահայտության արժեքը:

ա) 0-ի,


բ) 1-ի,

գ) 2-ի,

դ) արտահայտության արժեքը կախված է  $a, b, c$ -ի թվային արժեքներից:

12. Քառակուսին տրոհված է հավասար քառակուսիների, որոնցից երեքը մզացված է (տես՝ գծագիրը): Առնվազն քանի՞ քառակուսի ևս պետք է մզացնենք, որպեսզի ստացված մզացված պատկերը լինի սիմետրիկ տրված քառակուսու ինչպես մեկ, այնպես էլ մյուս անկյունագծի նկատմամբ:

- ա) 4
- ბ) 5
- գ) 6
- դ) 7



13. Երեք միմյանցից տարբեր բնական թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը հավասար է 9-ի: Ինչի՞ է հավասար այս թվերի գումարը:

ա) 13-ի,

ბ) 11-ի,

գ) 9-ի,

դ) անհնար է որոշել:

14. Քաղաքի երեք ամենաբարձր շինությունները համալսարանի, հյուրանոցի և բանկի շենքերն են: Դրա հետ միասին, դրանցից երեքն էլ տարբեր բարձրության են: Հայտնի է.

- Եթե համալսարանի շենքը ամենաբարձրը չէ, ապա այն բարձրությամբ երրորդն է:
- Եթե հյուրանոցի շենքը բարձրությամբ երկրորդն է, ապա բանկի շենքը բարձրությամբ երրորդն է:
- Եթե բանկի շենքը բարձրությամբ երրորդն է, ապա համալսարանի շենքը բարձրությամբ երկրորդն է:


Ըստ բարձրության որերո՞րդն է բանկի շենքը:

- ա) Առաջին,
- բ) երկրորդ,
- գ) երրորդ,
- դ) տրված տեղեկատվությունը բավարար չէ պատասխանը որոշելու համար:



## Տվյալների վերլուծում

Շրջանային դիագրամի վրա տրված է. թե 2010 թվականին մի երկրից արտահանված գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր կշռի քանի տոկոսն է եղել փոխադրված երկաթուղային, ավտոմոբիլային, ծովային կամ օդային տրանսպորտով:



*Հաջորդ երկու հարցերին պատասխանեք այս դիագրամի համաձայն:*

Անցնել հարցերին. [15](#) [16](#)

15. 2010 թվականին երկրից արտահանված գյուղատնտեսական արտադրանքից 90 հազար տոննան փոխադրվել օդային տրանսպորտով: Որքա՞ն է եղել այդ տարում երկրից արտահանված գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր կշիռը:

- ա) 650 հազար տոննա,
- բ) 700 հազար տոննա,
- գ) 750 հազար տոննա,
- դ) 800 հազար տոննա:

[Տեսնել դիագրամը](#)

16. Թվարկաձևերից ո՞րն է այն հարցը, որին պատասխանելու համար շրջանային դիագրամի վրա տրված տեղեկատվությունը **քավարար չէ**:

- ա) 2010 թվականին երկրից արտահանված գյուղատնտեսական արտադրանքից քանի՞ հազար տոննայով ավելի է փոխադրվել ավտոմոբիլային տրանսպորտով, օդային տրանսպորտի համեմատությամբ:
- ծ) 2010 թվականին երկրից արտահանված գյուղատնտեսական արտադրանքից քանի՞ տոկոսով պակաս է փոխադրվել երկաթուղային տրանսպորտով, ավտոմոբիլային տրանսպորտի համեմատությամբ:
- զ) 2010 թվականին երկրից արտահանված գյուղատնտեսական արտադրանքից քանի՞ անգամ ավելի է փոխադրվել ծովային տրանսպորտով, օդային տրանսպորտի համեմատությամբ:
- զ) 2010 թվականին երկրից արտահանված գյուղատնտեսական արտադրանքից քանի՞ անգամ պակաս է փոխադրվել օդային տրանսպորտով, ավտոմոբիլային տրանսպորտի համեմատությամբ:

[Տեսնել դիագրամը](#)

17. Դաշտը, որի մակերեսը 96 հեկտար է, հերկում են տրակտորներով, որոնք աշխատում են օրական 8 ժամ (միատեսակ տեմպով): Տրակտորների կողմից լրիվ աշխատանքային օրվա ընթացքում հերկած դաշտի մասերի ընդհանուր մակերեսը տատանվում է 13-14 հեկտարի շրջանակներում: Թվարկածներից որի՞ն կարող է հավասար լինել ամբողջ դաշտը հերկելու համար անհրաժեշտ ժամանակը:

- ա) 6 օր և 4 ժամ,
- ծ) 6 օր և 6 ժամ,
- գ) 7 օր և 2 ժամ,
- զ) 7 օր և 4 ժամ:

18.  $a$  դրական թիվ է, իսկ  $b$  բացասական: Եթե  $a$ -ն մեծացնենք, իսկ  $b$ -ն՝ փոքրացնենք, ապա հետևյալ արտահայտություններից ո՞րի արժեքը կփոքրանա անպայման:

Տ)  $\frac{a}{7b}$


Ծ)  $\frac{-4a}{b}$

Ճ)  $-3ab$

Գ)  $5ab$

19. Տրված է երեք դրույթ և դիագրամ.

- Բոլոր մեծ քաղաքներում երթևեկում է հասարակական տրանսպորտ:
- Որոշ մեծ քաղաքում գործում է մետրո:
- Որոշ փոքր քաղաքում չի երթևեկում հասարակական տրանսպորտ:



Ստորև տրված է դիագրամի տիրույթների և բազմությունների համապատասխանության մի քանի տարբերակ: Ո՞ր դեպքում են բոլոր երեք դրույթները ճշմարիտ դիագրամի համաձայն:

- ա) A – քաղաքներ, B – մեծ քաղաքներ, C – փոքր քաղաքներ, D – քաղաքներ, որտեղ գործում է մետրո, E – քաղաքներ, որոնցում երթևեկում է հասարակական տրանսպորտ,
- ծ) A – քաղաքներ, B – քաղաքներ, որտեղ երթևեկում է հասարակական տրանսպորտ, C – քաղաքներ, որտեղ գործում է մետրո, D – փոքր քաղաքներ, E – մեծ քաղաքներ,
- ժ) A – քաղաքներ, B – քաղաքներ, որտեղ երթևեկում է հասարակական տրանսպորտ, C – մեծ քաղաքներ, D – քաղաքներ, որտեղ գործում է մետրո, E – փոքր քաղաքներ,
- զ) A – քաղաքներ, B – քաղաքներ, որտեղ գործում է մետրո, C – քաղաքներ, որտեղ երթևեկում է հասարակական տրանսպորտ, D – փոքր քաղաքներ, E – մեծ քաղաքներ:

20. Սլաքներով ժամացույցի րոպեներ և ժամեր ցույց տվող սլաքների միջև սուր անկյան մեծությունը  $45^\circ$ -ից ավելի է: Թվարկաձևերից ի՞նչ ժամանակ կարող է ցույց տալ ժամացույցը:

I. 13:15

II. 11:50

ս) միայն I-ը,

ծ) միայն II-ը,

ժ) ինչպես I-ը, այնպես էլ II-ը,

զ) Ոչ մեկը:

21. Բնական  $m$  և  $n$  թվերը 5-ի բաժանելի ստացված մնացորդները միմյանցից տարբեր կենս թվեր են: Ինչի՞ է հավասար  $m$  և  $n$  թվերի արտադրյալը 5-ի բաժանելի ստացած մնացորդը:

- ա) 1-ի,
- բ) 2-ի,
- գ) 3-ի,
- դ) 4-ի:



## Տվյալների բավարարություն

22. Տրված է երկու բուրգ և դրանց մասին երկու պայման.

I. Առաջին բուրգի կողերի քանակը 8-ով ավելի է երկրորդ բուրգի կողերի քանակից:

II. Առաջին բուրգի գագաթների քանակը 4-ով ավելի է երկրորդ բուրգի գագաթների քանակից:

Այն բանի համար, որպեսզի պարզենք, որքանով է առաջին բուրգի նիստերի քանակը ավելի երկրորդ բուրգի նիստերի քանակից.

ս) I պայմանը բավարար է, իսկ II – ոչ,

ծ) II պայմանը բավարար է, իսկ I – ոչ,

ց) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

Պ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

յ) տրված պայմանները բավարար չեն:

**23.** Ընկերության եկամուտը մարտ ամսին, փետրվարի համեմատությամբ, կրճատվեց, բայց ապրիլին կրկին աճեց և հավասարվեց փետրվար ամսվա ցուցանիշին:

Տրված է երկու պայման.

I. Ընկերության եկամուտը փետրվարին 90 հազար լարի էր:

II. Մարտին ընկերության եկամուտը նախորդ ամսվա համեմատությամբ 10%-ով կրճատվեց:

Այն բանի համար, որպեսզի պարզենք, քանի տոկոսով աճեց ընկերության եկամուտը ապրիլին, նախորդ ամսվա համեմատությամբ.

ս) I պայմանը բավարար է, իսկ II – ոչ,

ծ) II պայմանը բավարար է, իսկ I – ոչ,

ց) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

գ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

դ) տրված պայմանները բավարար չեն:

24.  $a$  և  $b$  թվեր են:

Տրված է երկու պայման.

I.  $2a < 2b - 5$

II.  $3a < 3b + 5$

Այն բանի համար, որպեսզի պարզենք, որն է ավելի՝  $a$  թե՞  $b$ .

ա) I պայմանը բավարար է, իսկ II – ոչ,

բ) II պայմանը բավարար է, իսկ I – ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմանները բավարար չեն:

25. Քույր-եղբայրներից 2-ը աղջիկ է, 4-ը՝ տղա: Նրանցից ամենափոքրը Աննան է, իսկ ամենամեծը՝ Մարիամը: Քույրերի միջև տարիքային տարբերությունը 16 տարի է:

Տրված է երկու պայման.

I. Քույր-եղբայրների միջին տարիքը 11 տարի է:

II. Եղբայրների միջին տարիքը 12 տարի է:

Այն քանի համար, որպեսզի պարզենք, թե քանի տարեկան է Աննան.

ա) I պայմանը բավարար է, իսկ II – ոչ,

ծ) II պայմանը բավարար է, իսկ I – ոչ,

ց) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

Պ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

յ) տրված պայմանները բավարար չեն:

26.  $x$  և  $y$  բնական թվեր են.

Տրված է երկու պայման.

I.  $3x \cdot y$  զույգ թիվ է:

II.  $x - 3y$  կենտ թիվ է:

Այն բանի համար, որպեսզի պարզենք, զո՞ւյգ է, թե՞ կենտ  $x$  թիվը.

ա) I պայմանը բավարար է, իսկ II – ոչ,

բ) II պայմանը բավարար է, իսկ I – ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմանները բավարար չեն:

27.  $ABCD$  գուգահեռագիծ է:

Տրված է երկու պայման.

I.  $|AB| = |BC| + 3$  սմ:

II.  $|AB| = 3 \cdot |BC|$ :

Այն բանի համար, որպեսզի պարզենք, թե ինչի է հավասար  $ABCD$  գուգահեռագծի մեծ կողմի երկարության հարաբերակցությունը նրա պարագծին.

ա) I պայմանը բավարար է, իսկ II – ոչ,

ბ) II պայմանը բավարար է, իսկ I – ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմանները բավարար չեն:


28. Գտեք բոլոր այնպիսի բնական  $m$  և  $n$  թվերը, որոնք բավարարում են  $m^2n + mn = 36$  հավասարությանը:

Պատասխանը հիմնավորեք:

(Առավելագույն միավորը՝ 2)

29. ACMN քառակուսի է, իսկ ABCD այնպիսի ուղղանկյուն է, որի լայնությունը երկարության  $\frac{3}{4}$  մասն է կազմում (տես՝ գծագիրը): Քանի՞ անգամ ավելի է ADCMN հնգանկյան մակերեսը ABCD ուղղանկյան մակերեսից:

Պատասխանը հիմնավորեք:



(Առավելագույն միավորը՝ 3)



**30.** Դատարկ ավագանը ջրով լցնել հնարավոր է երկու խողովակով: Յուրաքանչյուր խողովակից ավագանի մեջ ամեն մեկ ժամում միևնույն քանակության ջուր է ներհոսում: Միայն առաջին խողովակով ավագանը լցնելու համար 3-անգամ պակաս ժամանակ է հարկավոր, քան միայն երկրորդ խողովակով լցնելու համար: Իսկ երկու խողովակներով միասին ավագանը լցնելու համար հարկավոր է 6 ժամ: Քանի՞ ժամում կլցվի դատարկ ավագանը, եթե ավագանի քառորդ մասը միայն առաջին խողովակով լցնենք, իսկ հետո մնացած մասը՝ միայն երկրորդ խողովակով:

Պատասխանը հիմնավորեք:

(Առավելագույն միավորը՝ 3)

**31.** Խորանարդի մակերևույթի մակերեսը 3-անգամ պակաս է այն ուղղանկյուն գուգահեռանիստի մակերևույթի մակերեսից, որի կողերի երկարությունները այնպես են հարաբերակցում միմյանց, ինչպես 2 : 3 : 6 : Քանի՞ անգամ պակաս է խորանարդի ծավալը ուղղանկյուն գուգահեռանիստի ծավալից:

Պատասխանը հիմնավորեք:

(Առավելագույն միավորը՝ 3)

32. Գնացքը  $A$  և  $B$  քաղաքների միջև տարածությունն անցավ առանց խոչընդոտների, հաստատուն արագությամբ: Ժամը 10-ն և 30 րոպեին գնացքն անցել էր  $A$  և  $B$  քաղաքների միջև տարածության  $\frac{1}{4}$  մասը, իսկ ժամը 11-ն և 45 րոպեին՝  $\frac{2}{3}$  մասը: Ժամը քանիսի՞ն հասավ գնացքը  $B$  քաղաք:

Պատասխանը հիմնավորեք:

(Առավելագույն միավորը՝ 3)

**33.** Կենտ քանակության անդամներից կազմված թվային հաջորդականության մեդիանա կոչվում է այս հաջորդականության անդամները աճի համաձայն դասավորելուց ստացված հաջորդականության մեջտեղի անդամը:  $x$ -ի  $n$ -րդ դրական արժեքի համար է  $4x$ ,  $x$ ,  $2x + 11$  թվային հաջորդականության մեդիանան հավասար 18-ի:

Պատասխանը հիմնավորեք:

(Առավելագույն միավորը՝ 3)

34. Վեցերորդ դասարանցի աշակերտներին առաջարկեցին հետևյալ աշխատանքը.

1) Գրեք սովորական կոտորակի տեսքով.


I. 0,71,      II. 0,050:

2) Հաշվարկեք  $5a^2 - 2(2a - 3b)$  արտահայտության արժեքը, երբ  $a = 4$ ,  $b = 2$ :

3) Կատարեք գծողություններ մեծությունների վրա.

I. 2 սմ 8 մմ : 7,      II. 1 ժամ 20 րոպե : 40:

4) Քառակուսու ձև ունեցող հրապարակի, որի կողմի երկարությունը 19 մ է, շուրջը 2 մ լայնության արահետը այնպես է շրջափակում, ինչպես դա տրված է գծագրի վրա: Քանի քառակուսի մետր է արահետի մակերեսը:



5) Շախմատիստների մրցաշարին մասնակցում էր 15 շախմատիստ: Յուրաքանչյուր շախմատիստը մնացած ամեն մի շախմատիստի հետ մեկական պարտիա խաղաց: Ընդամենը քանի՞ պարտիա է խաղարկվել այս մրցաշարում:

Հաջորդ էջին տրված է աշակերտներից մեկի աշխատանքը.

1) I.  $\frac{71}{100}$ , II.  $\frac{5}{1000}$ :

2)  $5a^2 - 2(2a - 3b) = a^2 - 6b = 16 - 12 = 4$ :

3) I. 2 սմ 8 մմ : 7 = 28 մմ : 7 = 4 մմ,

II. 1 ժամ 20 րոպե : 40 = 120 րոպե : 40 = 3 րոպե,

4)  $19 + 4 = 23$ ,  $23 \cdot 2 = 46$ ,  $46 \cdot 4 = 174$ ,

Արահետի մակերեսն է  $174 - 4 \cdot 2 \cdot 2 = 174 - 16 = 158$  (քառ. մ):

5) 15-ից 14-ը խաղում է, 1 – հանգստանում է: Մեկ օրում խաղարկվում է  $14 : 2 = 7$  պարտիա:

Ընդամենը կխաղարկվեր  $15 \cdot 7 = 95$  պարտիա:

- Ցույց տվեք աշակերտի կողմից բաց թողնված յուրաքանչյուր սխալը և գրեք ուղղված տեսքով:

(Առավելագույն միավորը՝ 3)

# Ակադեմիական հատուություններ

## Ընթերցած տեքստի վերախմաստավորում

*Ուշադրությամբ ընթերցեք և իմաստավորեք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրեք այն տարբերակը, որը ճիշտ է տրված տեքստի համաձայն:*

*Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, դրան պատասխանելու համար, հնարավոր է հարկ լինի վերադառնալ տեքստին, համապատասխան հատվածը նորից ընթերցել և կրկին անցնել հարցին: Դա կհեշտացնի ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմումը»:*



Այլ մարդու կարծիքները, հուզումները, մտադրությունները հասկանալ և այս իմացությունը՝ գիտելիքը սոցիալական իրավիճակների կառավարման համար կիրառելը կոչվում է «բանականության տեսություն»: Այս ունակությունը կապված է երեխայի սոցիալական գործունեության տարբեր տեսանկյունների հետ, ինչպիսիք են կարևոր գրույց վարելը, վեճերը կարգավորելը, ընկերներին պահպանելը: Եթե գիտենք, ինչ են մտածում, ինչ են սպասում, ինչ ապրումներ ունեն մեր կողքին գտնվող մարդիկ, ավելի լավ կկարողանանք նրանց վարքը կանխագուշակել և ավելի լավ կպատասխանենք նրանց՝ համապատասխան վարքով:

Բանականության տեսության հետազոտությանը նվիրվել են բազում փորձաքննություններ: Փորձաքննություններից մեկը կարող ենք այսպես պատկերացնել. 1. Երեխային, պայմանականորեն Աննային, ցույց են տալիս շոկոլադի արկղ (որի վրա համապատասխան պիտակ է փակցված) և հարցնում են, նրա կարծիքով, ի՞նչ կարող է դրված լինել արկղում: Աննան, բնական է, պատասխանում է, որ արկղի մեջ շոկոլադ է, 2. Բացում են արկղը և ցույց են տալիս Աննային, որ այս արկղում դրված է խաղալիք շուն: Հետո Աննայի աչքի առաջ փակում են արկղը, 3. Այնուհետև սենյակ են բերում այլ երեխայի, պայմանականորեն Գիորգին և հարցնում են Աննային. «Գիորգին երբեք չի նայել այս արկղի մեջ, քո կարծիքով, ի՞նչ կմտածի Գիորգին, ի՞նչ է դրված արկղի մեջ»: Մի հետազոտության համաձայն այս հարցին ճիշտ պատասխանեց 6-ից 9 տարեկան երեխաների 86%-ը, և 4-ից 6 տարեկան երեխաների մոտավորապես 50%-ը: Այս արդյունքը բացատրվեց նրանով, որ 4 տարեկան տարիքից երեխաները սկսում են իրականության և այս իրականության մասին մարդկանց կարծիքները միմյանցից տարբերել, հասկանալ այն, որ մարդը կարող է իրականության մասին սխալ պատկերացում ունենալ:

Անցնել հարցերին. [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#) [41](#)

[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#) [27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#) [41](#) [42](#)

Բանականության տեսությունը նշանակալից դեր է խաղում զարգացման խախտումները կանխագուշակելու տեսակետից: Օրինակ, աուտիստական սպեկտր ունեցող երեխաների մոտ, որոնց գլխավոր հիմնախնդիրը՝ հաղորդակցություն, հարաբերություն հաստատելն է բարդություն ներկայացնում, այս ունակությունը ուշ է զարգանում կամ կարող է ընդհանրապես չզարգանալ: Աուտիստ երեխային դժվար է ընկալել այն, որ այլ մարդ կարող է իրենից տարբեր կարծիք ունենալ:

Բանականության տեսության զարգացման մեխանիզմին փորձում են բացատրություն տալ մի քանի տարբեր տեսություններով: Միմուլյացիայի (ձևացման) տեսության համաձայն, որը ֆրանսիացի փիլիսոփա Ռենե Դեկարտի ուսմունքի վրա է հիմնվում, երեխան նախ և առաջ սովորում է սեփական կարծիքների, հուզումների և մտադրությունների նույնականացումը, իսկ հետո իր երևակայությունը սիմուլյացնելով (ձևացնելով), ներկայացնում է՝ ուրիշի փոխարեն եթե ինքը լիներ, ինչ կմտածեր և ինչ կզգար: Այլընտրական «Տեսության տեսության» համաձայն, երեխան սեփական շրջապատը դիտարկելու և այն գնահատելու ճանապարհով զարգացնում է բանականության տեսությունը: Երեխան դիտարկում է այլ անձանց, մտածում է նրանց վարքի մոտիվների, մտածումների, հուզումների մասին և միայն դրանից հետո է սովորում սեփական բանական գործընթացները կամ հուզումները հասկանալ:

Սոցիալական ունակությունները ուսուցանելը բարդ է, բայց, եթե գիտենանք, ինչ մեխանիզմներ են դրված որպես հիմք նրանց զարգացման մեջ, կկարողանանք օգնել երեխաներին, հաղթահարելու այն սոցիալական պահանջները, որոնք առօրյան դնում է նրանց առջև:

Անցում հարցերին. [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#) [41](#)

35. Ստորև թվարկածներից ո՞ր հարցին է հնարավոր պատասխանել առաջին պարբերության համաձայն:

ս) Ինչո՞ւմ է օգնում բանականության տեսությունը:

ծ) Ե՞րբ է զարգանում բանականության տեսությունը:

ց) Ինչպե՞ս է զարգանում բանականության տեսությունը:

ղ) Ո՞ր ունակություններն են բանականության տեսության զարգացման նախապայմանները:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

36. Երկրորդ պարբերությունում նկարագրված փորձաքննության համաձայն, 6-ից 9 տարեկան երեխաների 14%-ը «Գիորգին երբեք չի նայել այս արկղի մեջ, քո կարծիքով, ի՞նչ կմտածի Գիորգին, ի՞նչ է դրված արկղի մեջ» հարցին պատասխանեցին.

Գիորգին կմտածի, որ.

ս) արկղը դատարկ է,

ծ) արկղի մեջ դրված է շոկոլադ,

ց) արկղի մեջ դրված է խաղալիք շուն,

ճ) արկղի մեջ դրված է ինչպես շոկոլադ, այնպես էլ խաղալիք շուն:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

37. Երկրորդ պարբերությունում կարդում ենք. «Մի հետազոտության համաձայն, այս հարցին ճիշտ պատասխանեց 6-ից 9 տարեկան երեխաների 86%-ը և 4-ից 6 տարեկան երեխաների մոտավորապես 50%-ը»: Ստորև թվարկածներից ո՞ր եզրակացությունը կայացնելու հնարավորություն է տալիս նշված արդյունքը:

- ա) 6-ից 9 տարեկան երեխաների մեծամասնությունը դեռևս չի կարող ըմբռնել այն, որ մարդը իրականության մասին կարող է սխալ պատկերացում ունենալ,
- ծ) 4-ից 6 տարեկան տարիքի երեխաների մոտավորապես 50%-ի, իսկ 6-ից 9 տարեկան երեխաների 14%-ի մոտ հավանաբար, զարգացման խախտում է նկատվում,
- ժ) 4-ից 6 տարեկան երեխաների մեծամասնությունը արդեն կարող է ըմբռնել, որ իրականությունը և այս իրականության մասին մարդու պատկերացումը կարող են միմյանցից տարբեր լինել,
- զ) 6-ից 9 տարեկան տարիքում երեխաները ավելի լավ կարող են երևույթների մասին ուրիշի պատկերացումները հասկանալ, քան 4-ից 6 տարեկան հասակում:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

38. Ստորև թվարկածներից ո՞րը կարող է կիրառվել որպես այն բանի փաստարկ, որ բանականության տեսությունը կապված է սոցիալական ունակությունների հետ:

- Տ) Այս ունակությունը երեխայի սոցիալական գործունեության տարբեր տեսանկյունների հետ է կապված, ինչպիսիք են կարևոր գրույց վարելը, վեճերը կարգավորելը, ընկերներին պահպանելը,
- Ծ) 4 տարեկան տարիքից երեխաները սկսում են իրականության և այս իրականության մասին մարդու կարծիքները միմյանցից տարբերել,
- Ճ) աուտիստական սպեկտր ունեցող երեխաների մոտ, որոնց գլխավոր հիմնախնդիրը հաղորդակցություն, սոցիալական հարաբերություն հաստատելու բարդությունն է ներկայացնում, բանականության տեսությունը ուշ է զարգանում կամ կարող է բոլորովին չզարգանալ,
- Թ) սոցիալական ունակություններ ուսուցանելը բարդ է, բայց, եթե գիտենանք ինչ մեխանիզմներ են որպես հիմք դրված նրանց զարգացման մեջ, կկարողանանք օգնել երեխաներին, հաղթահարելու այն սոցիալական պահանջները, որոնք առօրյան դնում է նրանց առջև:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

39. Երրորդ պարբերությունում կարդում ենք. «Աուտիստ երեխային դժվար է ընկալել այն, որ այլ մարդ կարող է իրենից տարբեր կարծիք ունենալ»: Ստորև թվարկածներից ո՞րն է այս կարծիքի պատկերագրումը:

- ա) Եթե աուտիստ երեխայի մոտ պատահաբար բաժակը կոտրվեց և դա միայն նրա եղբայրը տեսավ, նա հասկանում է, որ այս «հանցանքի» պատասխանատվությունը մայրիկի առջև երկուսն էլ պետք է կրեն,
- ծ) Եթե աուտիստ երեխայի մոտ պատահաբար բաժակը կոտրվեց և դա նրա եղբայրը տեսավ, նա կարծում է, որ եղբայրը դրա մասին մայրիկին անպայման կպատմի,
- ց) Եթե աուտիստ երեխան տեսավ և հետևաբար գիտի, որ իր եղբայրը բաժակը կոտրեց, բայց դա մայրիկը չի տեսել, նա կարծում է, որ մայրիկը նույնպես գիտի, ով կոտրեց բաժակը,
- զ) Եթե աուտիստ երեխան տեսավ և հետևաբար գիտի, որ իր եղբայրը բաժակը կոտրեց, բայց դա մայրիկը չի տեսել, նա գլխի է ընկնում, որ մայրիկը չգիտի, ով կոտրեց բաժակը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

40. Տեքստում ներկայացված է երկու տեսություն, որոնցով փորձում են բացատրել բանականության տեսության զարգացման մեխանիզմը: Ի՞նչ հարաբերակցություն է դրանց միջև:

- ա) Ձևացման (սիմուլյացիայի) տեսությունում ներկայացված սկզբունքը լրացնում է բանականության տեսության զարգացման մեխանիզմի մասին տեսության տեսության կողմից առաջարկված բացատրությանը,
- ծ) ձևացման (սիմուլյացիայի) տեսությունում ներկայացված է բանականության տեսության զարգացման մասին տեսության տեսության հակառակ սկզբունքը,
- ճ) երկու տեսությունում էլ բանականության տեսության զարգացման մեխանիզմի մասին ներկայացված է նույնական բացատրություն,
- Տ) ձևացման (սիմուլյացիայի) տեսությունում ներկայացված սկզբունքը հաստատում է բանականության տեսության զարգացման մասին տեսության տեսությունում ներկայացված բացատրությունը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)



41. Ստորև թվարկածներից, ո՞ր հարցը չի քննարկված տեքստում:

ս) Բանականության տեսության զարգացման հիմունքները,

ծ) Բանականության տեսության փորձաքննական հիմնավորումը,

ց) Բանականության տեսության և այլ կոգնիտուրային ունակությունների կապը,

ղ) Բանականության տեսության նշանակությունը երեխայի զարգացման համար:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

## 42. Վերլուծական գիր

Վաժա Փշավելյան «Իմ աղերսանքը» բանաստեղծության մեջ գրում է.

«...Ուզում եմ խոտ լինել հնձելու,  
Չեմ ուզում լինել գերանդի,  
Ավելի լավ է ոչխար լինեմ,  
Միայն թե չլինեմ գայլ»,

(Թարգմանությունը կատարված է բանաստեղծության բովանդակության համաձայն)

Իսկ Միխեիլ Զավախիշվիլիի «Ջաղոյի եկվորները» վեպի գլխավոր կերպար Թեյմուրազ Խելիսթավին ասում է.

«-Ով խղճում է իր թշնամուն, նա ինքն իր անձն է զոհում: Փափկասիրտ և բարեսիրտ մարդիկ այս կյանքում չեն դիմանում: Ես նույնպես կյանքի գրքույկում այսօրվա համար այսպիսի պատգամ գրեցի. գայլերի հետ՝ գայլություն և ոչխարների հետ՝ նույնպես գայլություն:»

Ընթռնեք տրված հատվածները և դատողություն արեք.

- Ի՞նչ բարոյական երկրնտրանք է առաջացած տրված հատվածներում:
- Ի՞նչ մարտահրավերների առջև է կանգնեցնում այս ընտրությունն ուսուցիչներին ուսուցման և դաստիարակության գործընթացում:
- Ի՞նչ կարելի է նախանշել որպես այս հիմնախնդրի լուծման ուղի:

*Դատողության ամրապնդման համար բերեք փաստարկներ և օրինակներ:*

*Ձեր կողմից գրված փոխադրությունը պետք է պարունակի առնվազն 100 բառ:*

*(Առավելագույն միավորը 11)*